Յովհան Սրբ եպիսկոպոսի՝ յամին 1832, տաճարի հարաւային դրան առաջին, այսպիսի տապանագրով.

«Արփի պանծալի հրաշագեղ զարմանալի, տապան Տեառն Յովհաննու Սրբ եպիսկոպոսի. էր սա առաջնորդ Սաղիանու ուխտի. փոխեցաւ առ Տէր յոյսն ամենի, 1832 թուի, յուլիս ամսոյ քսան և ութի»։

Դանիէլ Սրբ եպիսկոպոսի՝ յամին 1868, նոյնպէս հարաւային դրան առաջին՝ այսպիսի տապանագրով՝

«Վիճակաւոր առաջնորդ թեմին Հայոց Համախուոյ Դանիէլ Սրբ եպիսկոպոս Շահնազարեանց Տարօնեցի, վախճանեցաւ 41 ամաց, 'ի 4 յուլիսի 1868 ամի»։

Իգնատիոս վարդապետի թվ. Ռ. (1551) տաճարի արևմտեան դրան հանդէպ, համառօտ գրով.

«Այս է տապան Իգնատիոս վարդապետի թվ.Ռ.»։

Մի հին խաչքարի վերայ նոյն արևմտեան դրան մօտ՝ անձև մանր գրերով գրուած՝

«Սուրբ Խաչս յիշատակ մալիք ճանայ, Աւաքայ, Պապաճանայ»։

Երևի 4, 5 հարիւր տարեայ արձանագիր է
Վանքի հին գերեզմանատան մէջ՝ մեծ խաչքարի վերայ.

«Սուրբ Խաչս յիշատակ է Թումայ վարդապետի և բարեխաւս տէր Եփրեմին» (ՌՁԲ. 1633).